



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(2020 թվական)

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի ընտրություններ չեն կայացել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, մարզի համայնքներում 2020 թվականի ընթացքում կայացվել է ավագանու՝ 2519, համայնքի ղեկավարի՝ 13 230 որոշում:

Մարզի համայնքներում 2020 թվականին գործունեություն են իրականացրել 1932 առևտրի, 281 հանրային սննդի, 415 կենցաղային ծառայության օբյեկտներ: 2020 թվականի ընթացքում ստուգումներ են կատարվել 829 առևտրի, 116 հանրային սննդի, 88 կենցաղային ծառայության օբյեկտներում: Խախտումներ արձանագրվել են 2 առևտրի օբյեկտներում, տրվել են նախազգուշացումներ, կիրառվել են վարչական տուգանքներ՝ 40,0 հազար դրամի չափով:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզի մի շարք համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազամատակարարման, փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ:

2020 թվականի սուբվենցիոն ծրագրերով մարզի Աբովյան, Գողթ, Բալախովիտ, Բյուրեղավան, Առինջ, Քարաշամբ, Հրազդան, Ակունք, Թեղենիք, Նոր Երզնկա, Սուլակ, Լեռնանիստ, Մեղրաձոր, Կամարիս, Գեղարդ, Նոր Գեղի, Պռոշյան, Քանաքեռավան, Եղվարդ, Արզնի, Ծաղկաձոր, Գետամեջ, Նոր Արտամետ համայնքներում իրականացվել են ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ:

Մարզի Հրազդան համայնքում սուբվենցիոն ծրագրով իրականացվել են բազմաբնակարան շենքերի թվով 25 վերելակների վերանորոգման աշխատանքներ:

2020 թվականին ԱԳԼՃԿ-ների հասարակական զուգարաններն արդիականացվել և բերվել են հասարակական զուգարանների նկատմամբ՝ ուղեցույցում նշված պահանջներին համապատասխան վիճակի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզի հողային հաշվեկշիռը հետևյալն է՝ գյուղ.նշանակության հողեր՝ 154622,1 հեկտար, այդ թվում՝ վարելահողեր՝ 37708.4 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 2779.6 հեկտար, խոտհարք՝ 11257,0 հեկտար, արոտներ՝ 78922.0 հեկտար, այլ հողատեսքեր՝ 23843,1 հեկտար:

Մարզում գործում են 35834 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Գյուղացիական տնտեսությունների կողմից 2020 թվականի բերքի տակ կատարվել է 13690 հա ցանք, այդ թվում՝ աշնանացան ցորեն-3509 հա, գարնանացան ցորեն-116 հա, գարնանացան գարի-3239 հա, այլ հացահատիկ/հաճար/-2323 հա, հատիկաընդեղեն-226 հա, տեխնիկական մշակաբույսեր- 58.5 հա, կաւտոֆիլ- 637 հա, բանջար- 905 հա, կերային մշակաբույսեր/ ներառյալ անցյալ տարիների ցանքը/- 2255.4 հա:

Մարզում դրական տեղաշարժերից առանձնապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի և հատապտղի արտադրության ավելացումը: Ընդհանուր առմամբ ջերմոցների տարածքը կազմում է 91.5 հա, որից բանջարեղենի արտադրություն՝ 44.28 հա: Ընթացիկ տարում գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվել է՝ հացահատիկ և ընդեղեն-18370 տոննա, կարտոֆիլ- 12145տոննա, բանջար-12955 տոննա, պտուղ- 15870 տոննա, որից հատապտուղ-1213 տոննա, կուտակվել է՝ խոտ- 29945 տոննա, ծղոտ- 9500 տոննա: Մարզում առկա է 3149 հա պտղատու այգի, որից 630 հա ինտենսիվ, դրանից 308 հա հիմնվել է նորագույն տեխնոլոգիաներո /հակակարկտային ցանց, կաթիլային ոռոգում և այլն/:

Ինտենսիվ այգիներից հակակարկտային ցանցով ապահովված է 40 հա, կաթիլային եղանակով ոռոգվում է 376 հա: 2020 թվականին մարզում հիմնվել է 25 հեկտար պտղատու այգի և 3.7 հեկտար ջերմոց: Մարզում առկա է 27 հակակարկտային կայան, որից 3-ը տեղադրվել է հաշվետու տարում ՀՀ կառավարության որոշմամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, որոնք հանձնված են ԱԻՆ-ի համապատասխան ծառայությունների կառավարմանը: Տեղադրման ընթացքի մեջ է ևս 7 կայան Եղվարդ համայնքում:

Ընթացիկ տարում նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է անասնազլխաքանակի աճ՝ մասնավորապես խոզերի և թռչունների, համապատասխանաբար՝ 18 և 28 տոկոսով:

Մարզում առկա է ԽԵԿ, ՄԵԿ և խոզերի սպանդանոցային մորթ իրականացնող 7 խոշոր կազմակերպություն, որոնցից 1-ն ունի ընթացիկ նորոգման կարիք, թռչնի 2 սպանդանոց, որոնք վերապրոֆիլման գործընթացում են՝ միաժամանակ խոզի մորթ կազմակերպելու նպատակով, 11 փոքր սպանդանոց, որոնք գործում են առանձին ֆերմերային տնտեսություններին կից՝ սեփական գլխաքանակի մորթը կազմակերպելու նպատակով: Վերջիններից 4-ը պատրաստ են այլ կազմակերպություններից ընդունելու անասնազլխաքանակ՝ սպանդանոցային մորթ իրականացնելու համար: Խոշոր սպանդանոցներից 4-ը գտնվում է Աբովյանի, 1-ը՝ Հրազդանի, 2-ը՝ Նաիրիի տարածաշրջանում:

2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ, մարզի 942 շահառու դիմել է գյուղատնտեսության ոլորտին պետական աջակցությամբ տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին և անցել համապատասխան առցանց հավաստագրման փուլը: Հայտատու շահառուների հիմնական մասը պատրաստվում է միջոցներ ներդնել անասնապահության բնագավառում, իսկ մյուս մասը՝ դաշտավարության, այգեգործության, ջերմատնային տնտեսության և այլ ճյուղերում, ընթացքի մեջ է խելացի գոմերի կառուցման ծրագիրը:

2020 թվականի աշնանը կատարվել է 3789 հեկտար աշնանացան հացահատիկի ցանք նախորդ տարվա 3509 հեկտարի դիմաց:

Առանձնակի հետաքրքրություն կա ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների, խաղողի այգիների և հատապտղանոցների հիմնման համար իրականացվող աջակցության ծրագրերի նկատմամբ:

Ընթացիկ տարում ծրագրի շահառուների թիվը մարզում 8-ն է, որոնք փոխհատուցման բաղադրիչի հայտ են ներկայացրել: Աճում է հետաքրքրությունը նաև ռոռզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի հանդեպ, որից օգտվելու հայտ է ներկայացրել 3 շահառու և ստացել համապատասխան փոխհատուցում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 89 հանրակրթական ուսումնական հաստատություններ. 59-ը՝ միջնակարգ, 30-ը՝ հիմնական, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության ենթակայության 12 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ 11 ավագ դպրոց, 1 կրթահամալիր /Աբովյանի կրթահամալիր /, 6 պետական քոլեջ, 5 արհեստագործական ուսումնարան, 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/:

2020-2021 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների 1576 դասարաններում սովորում են 37759 աշակերտներ, առաջին դասարան են հաճախել 3769 աշակերտներ:

Այս ուսումնական տարվանից մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվելու է ներառական կրթություն, այս պահին 216 աշակերտներ սովորում են անհատական ուսումնական պլաններով: Դպրոց ժամանակավոր չհաճախող 22 աշակերտների համար կազմակերպվել են տնային ուսուցում:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 89 դպրոցներից 79-ը, իսկ 10-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով: 2020 թվականից արդեն լոկալ ջեռուցմամբ ջեռուցվել են Փյունիկի, Արտավազի, Ֆանտանի և Գետամեջի միջնակարգ դպրոցները:

Մարզի 89 ուսումնական հաստատություններից 86-ում ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրի» հետ համագործակցությամբ իրականացվում է «Դպրոցական սնունդ» ներդրումային ծրագիրը: Այս ուսումնական կիսամյակում,

համավարակով պայմանավորված, 16077 աշակերտների, նախակրթարանի սաների և Արցախից տեղափոխված երեխաների դպրոցական սնունդը հանձնվել է սննդային փաթեթների տեսքով:

2020 թվականին տեղի է ունեցել 13 տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթներ, որոնցից համալրվել են 10-ը: Այս պահին մրցույթներ է հայտարարված Սևաբերդի, Կապուտանի և Արգելի միջնակարգ դպրոցներ տնօրենի թափուր պաշտոնի համար:

2020 թվականին տեղի է ունեցել 67 դպրոցում 212 ուսուցչի թափուր տեղի մրցույթ, սակայն որոշ առարկաների գծով /ինֆորմատիկա, տեխնոլոգիա, կերպարվեստ, գերմաներեն, երգ- երաժշտություն, ֆիզկուլտուրա/ մրցույթներում մասնակիցներ չեն լինում:

Մարզի դպրոցականների առարկայական օլիմպիադաների հաղթողները 16 առարկաներից հանրապետական փուլում շահել են 2 առաջին կարգի, 4 երկրորդ կարգի և 12 երրորդ կարգի դիպլոմներ: 8 աշակերտներ արժանացել են գովասանագրերի:

Այս ժամանակակա հատվածում Արցախից տեղափոխված շուրջ 1033 երեխաների տրամադրվել է դպրոցական պայուսակներ՝ գրենական պիտույքներով և գրասալիկներ /պլանշետներ/: Հեռավար կրթության իրականացնելու համար Կոտայքի մարզին հատկացվել է 270 համակարգիչ, բջջային հեռախոսներ և գրասալիկներ, որոնք բաժանվել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

Մարզում գործում են 23 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 4 թանգարաններ, 1 թատրոն, 47 գրադարաններ, 32 մշակույթի տներ և ակումբներ / կան 43-ը/, 1 պատկերասրահ, 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 13 մանկապատանեկան մարզադպրոցներ:

Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 4178 աշակերտներ, աշխատում են 429 մանկավարժներ: Մարզադպրոցներում աշխատում են 134 մարզիչներ, պարապոդ սաների թիվը 3225 է:

Մարզպետարանի և Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի համագործակցությամբ հունվարի 18-20-ը Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոցում կազմակերպվել է մարզի 2020 թվականի սամբոյի պատանեկան վարկանիշային առաջնությունը:

Փետրվարի 20-ից մարտի 6-ը անցկացվել են ՀՀ դպրոցականների 28-րդ մարզական խաղերի վոլեյբոլի փնջային առաջնությունը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 39 բուժհաստատություններ՝ որոնցից 34 մարզպետարանի ենթակայության են, իսկ համայնքային ենթակայության՝ 5, 4 բժշկական կենտրոններ /Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Նաիրի/, 1 ծննդատուն /Աբովյան/, 1 պոլիկլինիկա /Նոր Հաճըն/, 2 առողջության կենտրոն /Գառնի, Արգել/, 26 առողջության առաջնային պահպանման կենտրոններ և բժշկական ամբուլատորիաներ: Մարզի մահճակալային ֆոնդը **253** է: Մահճակալային տարեկան զբաղվածությունը մոտ 79%: Մարզի բժշկական կազմակերպություններում աշխատում են 1703 անձ՝ 432 բժիշկներ, 803 բուժքույրեր, 172 կրտսեր բուժաշխատող, 296 վարչատնտեսական կազմ:

Կոտայքի մարզի ծննդոգնության ծառայություններ իրականացնող բուժհաստատություններում 2020 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գրանցվել է 1833 ծնունդ (որից 13 գույգ)՝ 956 տղա, 890 աղջիկ:

| | | |
|--------------------|-----------------------|-----------------------|
| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2019թ. 11 ամիս | 2020թ. 11 ամիս |
| ԾՆՈՒՆԴՆԵՐ | 1724 | 1833 |

Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-2019) դեմ պայքարի միջոցառումների շրջանակներում՝ բնակչության համար ԱԱՊ ծառայությունների հասանելիությունը ոչ աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերից դուրս ապահովելու նպատակով և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության 30.03.2020թ. ՈԼԲ/02.1/5053-2020 գրությունը՝ ՀՀ մարզպետարանների ենթակայության պոլիկլինիկական հաստատություններում շաբաթ և կիրակի օրերին՝ ժամը 10:00-ից 16:00-ը ներառյալ, սահմանվել են հերթապահություններ ԱԱՊ մասնագետների ընդգրկմամբ, ապահովելով տվյալ պոլիկլինիկական հաստատության հեռախոսակապի անխափան աշխատանքը, իսկ հերթապահություններից և աշխատաժամանակից դուրս՝ տնային հերթապահություններ, ապահովելով հեռախոսահամարի վերահասցեավորումը հերթապահող մասնագետին:

COVID-19 միջին ծանրության (առանց հիպօքսիայի թոքաբորբ) տնային պայմաններում բժշկական հսկողության տակ գտնվող պացիենտներին, (5-7-օրվա բուժման կուրսի հաշվարկով նշանակվող դեղեր) ինքնամեկուսացման վայրեր տնային այցելության միջոցով անվճար տրամադրվել է համապատասխան դեղորայք:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բաշխացուցակի համաձայն Ջերմուկի <<Արարատ>> մոր և մանկան առողջարան>> ՓԲԸ-ում պետության կողմից երաշխավորված առողջարանային-վերականգնողական բուժում են ստացել 24 երեխա, 22 խնամակալների ուղեկցությամբ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N3918-Ա հրամանի համաձայն Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի ճոպանուղու տարածքում 2019 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2020 թվականի մարտի 8-ը՝ ուրբաթ, շաբաթ, կիրակի, տոնական և ոչ աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-18:00-ը

սահմանվել է շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահություն՝ անհրաժեշտության դեպքում քաղաքացիների, ինչպես նաև զբոսաշրջիկների, հանգստացողների բժշկական օգնությունն ու սպասարկումն արագ և պատշաճ կազմակերպելու նպատակով: Սահմանված հերթապահությունն իրականացվել է «Հրագդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից:

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի դեմ պայքարի շրջանակներում Կոտայքի մարզպետարանին և վերջինիս ենթակայության առողջապահական հաստատություններին մի շարք բարերարների միջոցով իրականացվել են բազմակողմանի աջակցություններ:

2020 թվականի հունիսի 18-ին Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն քաղաքացիների բժշկական օգնության և սպասարկման որակն բարելավելու նպատակով շահագործման հանձնեց լիովին վերազինված և նորոգված շտապօգնության ընդունարանի և էմերջենսի անհետաձգելի բուժօգնության բաժանմունքը՝ տնտեսած միջոցներից ներդնելով շուրջ 1 մլն.94 հազար ՀՀ դրամ:

Մեկնարկել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 15-ի «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում անշարժ գույք ներդնելու մասին» N1688-Ա որոշման համաձայն, անշարժ գույքի ընդունում-հանձնումը կազմակերպելու գործընթացը, որի տարածքում կկատուցվի ընկերության նոր մասնաշենքը:

Մեկնարկել է «Ռ. Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լաբորատոր-գործիքային հետազոտությունները մեկ մասնաշենքում կենտրոնացնելուն ուղղված աշխատանքները և Հայաստանի Հանրապետության Կառավարության «Անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք հանձնելու մասին» որոշման նախագծի քննարկումը, որի շրջանակներում տարածաշրջանի ազգաբնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն պատշաճ մակարդակով տրամադրելու նպատակով «Ռ. Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ձեռք է բերել ռենտգեն թվային սարքավորում՝ շուրջ 43 մլն.500 հազար ՀՀ դրամ արժողությամբ և ախտորոշման գերձայնային, ուլտրաձայնային ու դոպլեր բժշկական սարքավորումը՝ շուրջ 9 մլն. 950 հազար ՀՀ դրամ արժողությամբ:

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Իսահակյան 3 հասցեում գտնվող և սեփականության իրավունքով «Չարենցավանի ԲԿ» ՓԲԸ-ին պատկանող պոլիկլինիկայի շենքի 1082.8մ² տարածքը վարձակալության հիմունքներով երկկողմ պայմանագրի համաձայն, 10 տարի ժամկետով տրվել է «Արմենակ և Աննա Թադևոսյանների ԲԿ» հիմնադրամին՝ մանկական վերականգնողական կենտրոն ստեղծելու նպատակով, որը աննախադեպ նախաձեռնությունն է Կոտայքի մարզում:

«Հրագդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն մասնակի վերապրոֆիլավորվել է COVID-19 պացիենտների բուժման համար: ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից հաստատվել է վերջինիս հաստիքացուցակը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը ռազմական դրության պայմաններում պատշաճ կերպով իրականացրել է ՀՀ Կոտայքի մարզի բժշկական ծառայության պլանով նախատեսված գործառնությունները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին սահմանված ժամկետներում կազմվել են մարզպետարանի 2020 թվականի ապարատի պահպանման, կրթության, մշակույթի և այլ ոլորտների ծախսերի ֆինանսավորման, ինչպես նաև 2021-2023թթ ՄԺԾԾ և 2021 թվականի բյուջետային հայտերը:

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի համար 2020թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր 627,247.3 հազար դրամ, ճշտված պլանը՝ 581929,6 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 580601,8 հազար դրամը, կամ 99,8%-ը, իսկ տնտեսված գումարը՝ 1327.8 հազար դրամը գոյացել է էներգետիկ և կապի ծառայություններ, գործուղման ծախսեր հոդվածներից: 45.3 մլն դրամ աշխատավարձի, պարգևատրման, այլ նպաստներ բյուջեից, գործուղման ծախսերի և այլ հոդվածներից վերադարձվել է բյուջե համաճարկի և ռազմական դրության հետ կապված ծախսերին ուղղելու համար:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար 2020թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 148612,7 հազար դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է:

Մշակութային ծրագրերի գծով 2020թ. բյուջեով պլանավորվել էր 5149,1 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 2637,1 հազար դրամ, Չծախսված 2512,0 հազար դրամը համաճարակի պատճառով չանցկացված մշակութային միջոցառումների համար նախատեսված գումարն է:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային-փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսված 59,035.9 հազար դրամը ամբողջությամբ ծախսվել է:

Այլընտրանքային ծառայություններ հոդվածով նախատեսվել էր 3600.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 3407,4 հազար դրամ, տնտեսումը կազմել է 192.6 հազար դրամ:

Սահմանված ժամկետներում բոլոր ուսումնական հաստատությունների հետ կնքվել են ֆինանսական պայմանագրեր, ինչպես նաև պայմանագրերի անբաժանելի մաս կազմող հանաձայնագրեր ու հանձնման-ընդունման արձանագրություններ:

Ֆինանսական ծանր վիճակում գտնվող դպրոցներին վերաբաշխման արդյունքում հատկացվել են դրամական միջոցներ ֆինանսական տարին առանց պարտքերի փակելու նպատակով, միաժամանակ վերաբաշխման արդյունքներով լուծվել է մարզում դպրոցների ջեռուցման անցկացման և այլ խնդիրներ՝ 2020թ մարզի 19 դպրոցներում իրականացված ընթացիկ և կապիտալ վերանորոգումները դրամական արտահայտությամբ կազմել են շուրջ 100,0 մլն դրամ:

Կրթական ծրագրերի գծով 2020թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 6,885,820.8 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 6,845,020.3 հազար դրամը, կամ տնտեսումը կազմել է 40.800 հազար դրամ:

Ըստ կրթական ծրագրերի այն ունի հետևյալ պատկերը՝

- հանրակրթական ծրագրերի գծով նախատեսված 6,601,384.3 հազար դրամից փաստացի ծախսվել է 6,601,384.3 հազար դրամ, որը ծախսվել է ամբողջությամբ::

- հատուկ կրթություն ծրագրի գծով նախատեսված 86.158.0 հազար դրամից փաստացի ծախսվել է 70.936.0 հազար դրամ: Տնտեսումը կազմել է 15.222.0 հազար դրամ, որը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

- Ներառական կրթություն ծրագրով 2020 թվականին նախատեսված 70.443.0 հազար դրամից ծախսվել է 65.140.9 հազար դրամ: Տնտեսվել է 5.302.1 հազար դրամ, որը առաջացել է սննդի վերահաշվարկի արդյունքում:

- Նախադպրոցական կրթություն ծրագրով 2020 թվականին նախատեսված 74,736.1 հազար դրամից ծախսվել է 65,316.5 հազար դրամ: Տնտեսվել է 7.149.6 հազար դրամ, որը առաջացել է ՀՀ Կոտայքի մարզպետի որոշմամբ թվով 15 դպրոցներից պահված գումարի արդյունքում:

2020 թվականին մարզում կրթություն են ստացել 34.389 աշակերտ:

Հանրակրթության բնագավառում աշխատել են շուրջ 3001 մանկավարժ, 236 վարչական և 1350 ուսումնասօժանդակ աշխատողներ:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրով նախատեսված 77.352.3 հազար դրամը ծախսվել է ամբողջությամբ:

Տարվա կտրվածքով մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը վեց հարկատեսակների գծով ապահովել է բարձր ցուցանիշ՝ տոկոսներով արտահայտված, կատարողականը կազմել է 101,3 տոկոս:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարվա փաստաթղթաշրջանառությունը կազմել է 37837 փաստաթուղթ, որից՝ 2642 դիմումներ քաղաքացիներից:

Կատարվել են մարզի խորհրդի նիստերի, օպերատիվ խորհրդակցությունների արձանագրման և տպագրման աշխատանքներ:

ՀՀ Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարությունից ստացվել է 78000 հողի հարկի և գույքահարկի անդորրագիր, բաշխվել՝ 74300-ը:

Հանդիսանալով Կոտայքի մարզպետարանի կարիքների համար բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող գնումների համակարգող՝ իրականացվել են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

գործառույթներ, նախապատրաստվել և մարզպետարանի գլխավոր քարտուղարի հաստատմանն է ներկայացվել մարզպետարանի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերը:

Մարզպետարանի, մարզպետարանի ենթակայության հիմնարկների և մարզի գյուղական համայնքների գնումների պլանները, գնումների պլանների փոփոխությունները, գնահատող հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, հրավերները և գնման հայտարարությունները տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am/moderator համակարգ:

Մասնակցել են մարզպետարանի ակտիվների գույքագրման և մարզպետարանի ենթակայության հիմնարկների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման աշխատանքներին:

ջակցություն է ցույց տրվել ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիներին սահմանված նմուշի համապատասխան դիմումների լրացման, անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ներկայացնելու հարցերում: ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունից ստացված ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների դիմումների վերաբերյալ պատասխանների մասին իրազեկել ենք դիմումատուներին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի կողմից ստուգանշվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 480 որոշումներ, գլխավոր քարտուղարի 476 հրամաններ:

Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 42 համայնքների ավագանիների թվով 2041 որոշումներ, համայնքներիի ղեկավարների՝ 12366 որոշումներ, արձանագրված թերությունների վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

2020 թվականին ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների ստացման նպատակով մարզի 38 համայնքի կողմից ներկայացվել է համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 104 ծրագրային հայտ՝ ընդհանուր 6.6 մլրդ. դրամ արժեքով, որից՝ 3.5 մլրդ. դրամ նախատեսվել է ներդնել համայնքների բյուջեների, 3.0 մլրդ. դրամ՝ պետական բյուջեի և 69.0 մլն. դրամ՝ այլ կազմակերպությունների միջոցներից:

Ներկայացված բոլոր ծրագրերը քննարկվել և հավանության են արժանացել 2020 թվականի սուբվենցիայի ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Ծրագրերից 2020թ. ընթացքում ավարտվել են՝ ճանապարհների բարեկարգում՝ 26 ծրագիր /19 համայնք/, բազմաբնակարան շենքերի տանիքների, վերելակների նորոգում՝ 2 ծրագիր /2 համայնք/, բնակավայրերի գազաֆիկացում՝ 5 ծրագիր /5 համայնք/, խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում՝ 8 ծրագիր /7 համայնք/, ռոտոգման համակարգի կառուցում՝ 2 ծրագիր /2 համայնք/, մշակույթի տների վերանորոգում՝ 5 ծրագիր /5 համայնք/, վարչական շենքերի վերանորոգում՝ 4 ծրագիր /4 համայնք/, մանկապարտեզների վերանորոգում՝ 5 ծրագիր /5 համայնք/, աղբատար մեքենայի և աղբարկղերի ձեռքբերում՝ 1 ծրագիր /1 համայնք/, արևային, ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 1 ծրագիր /1 համայնք/, փողոցային լուսավորության համակարգի կառուցում՝ 4 ծրագիր /4 համայնք/:

39 սուբվենցիայի ծրագրի աշխատանքները, պայմանավորված երկրում ռազմական դրության և կորոնավիրուսի հանգամանքով, երկարաձգվել են և նախատեսվում է ավարտին հասցնել 2021թ. ընթացքում:

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ, կազմել է 251200 մարդ, որից 136800-ը քաղաքաբնակներ են (54.5%), 114400-ը՝ գյուղաբնակներ (45.5%):

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով իրավական և մասնագիտական վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմում ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 6 համայնքներում՝ Մեղրաձոր, Զրառատ, Վերին Պտղնի, Քարաշամբ, Գետամեջ և Ողջաբերդ:

ՀՀ կառավարության 23.07.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքներից ստացվել են թվով 31 միավոր հողամասերի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություններ, որոնցից 30-ը ստացել են մարզպետի համաձայնությունը և դրանց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք, իսկ մեկ միավորի նկատմամբ առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 24-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ առաջարկությունը համաձայնեցնել լիազոր մարմնի հետ:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից առանց ծնողական խնամքի մնացած և ԱԾԽՄ թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 113 ԱԾԽՄ և ԱԾԽՄ թվին պատկանող անձինք, ԱԾԽՄ երեխաներ են 71-ը (նրանցից 16-ը հաշվառվել են 2020թ. ընթացքում), իսկ ԱԾԽՄ թվին պատկանող՝ 42 անձ:

Հաշվառման մեջ են գտնվում 29 իրավախախտ անչափահասներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի կողմից տրված եզրակացությունների հիման վրա բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ են տեղավորվել 5 երեխաներ, նույն հաստատություններից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 5 երեխա:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման, ներառական կրթության համակարգ ընդգրկելու և նրանց կարիքի գնահատման առումով, արդյունքում այս տարվա ընթացքում համապատասխան եզրակացությունների հիման վրա 216 վկայագրեր են տրվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

Մարզպետարան (հանրային ծառայություն և աշխատանքային հարաբերություններ)

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են 498 որոշումներ, իսկ գլխավոր քարտուղարի կողմից՝ 479 հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2020 թվականի հաստիքացուցակում առկա են 133 հաստիքներ (պաշտոններ), որից 4-ը վարչական պաշտոններ են, 7-ը՝ հայեցողական պաշտոններ, 111-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ, 4-ը՝ քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոն և 7-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնի են նշանակվել 16 անձ, որից 1-ը՝ վարչական, 5-ը՝ հայեցողական, 8-ը քաղաքացիական աշխատանք կատարողի և 2-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններում: Պաշտոնից ազատվել են՝ 15 անձ, որից 1-ը՝ վարչական, 6-ը՝ հայեցողական, 5-ը քաղաքացիական աշխատանք կատարողի և 3-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններից:

Քաղաքացիական ծառայություն

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 111 պաշտոններ, որից 22-ը թափուր են: Կայացել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 12 մրցույթներ, որից 4-ը արտաքին և 8-ը ներքին մրցույթներ: Պաշտոնների են նշանակվել 12 քաղաքացիական ծառայողներ: 2 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել է մեկ տարի ժամկետով: Պաշտոններից ազատվել են 19 քաղաքացիական ծառայողներ՝ 14-ը անձնական դիմումի համաձայն, 1-ը քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու հիմքով (66 տարեկան), 3-ը հաստիքների կրճատման հիմքով (ներքին աուդիտի բաժին) և 1-ը ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացմամբ: Վերապատրաստվել են 97 քաղաքացիական ծառայողներ: Քաղաքացիական ծառայության

Ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքվել է 1 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել են՝ 4-ը:

Առողջապահական բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 8 առողջապահական բաժնետիրական ընկերություններ և 27 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 6 առողջապահական բաժնետիրական ընկերության և 24 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոններ: Պաշտոնից ազատվել են 4 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության (1-ի լիազորությունները դադարեցվել են) և 1 առողջապահական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն: 1 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ «Նկատողություն» կարգապահական տույժի:

Կրթական, մշակութային և մարզական պետական ոչ առևտրային կազմակերպություններ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 92 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոցներ, 59 միջնակարգ դպրոցներ և 30 հիմնական դպրոցներ: Թափուր է 7 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոն: Նշանակվել են 15 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: Ազատվել են 12 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ, որից 1-ը՝ անձնական դիմումի համաձայն, 4-ը՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով, 4-ը՝ պաշտոնավարման առավելագույն տարիքը լրանալու հիմքով (65 տարեկան), 2-ը՝ մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար կրկնակի կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով, 1-ը՝ օրենքի պահանջների խախտմամբ նշանակվելու հիմքով: 9 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 4-ը «Նկատողություն» և 5-ը «Խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

2020 թվականի ընթացքում տեղեկատվության և հասարականության հետ կապերի բաժինը իր գործառույթների շրջանակներում կատարել է մարզպետարանի կողմից իրականացվող նախաձեռնությունների, աշխատանքային խորհրդակցությունների, մարզպետի, փոխմարզպետերի, մարզպետարանի պաշտոնատար անձանց հանդիպումների, քննարկումների, աշխատանքային այցելությունների, ինչպես նաև մարզի համայնքներում տեղի ունեցած իրադարձությունների, միջոցառումների լուսաբանման աշխատանքներ (շուրջ 650 թողարկում):

Կորոնավիրուսի համավարակի հետևանքով մեր հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ակտիվորեն համագործակցելով ՏԿԵ նախարարության համապատասխան ոլորտը համակարգող մարմնի հետ, պատշաճորեն իրականացրել է

նան ՀՀ Պարետատան կողմից սահմանված ցուցումներից բխող լուսաբանման աշխատանքներ:

2020 թվականի ընթացքում կազմակերպվել է զանգվածային լրատվության ներկայացուցիչների հետ Կոտայքի մարզպետի, ապա նաև մարզպետի պարտականությունները կատարող փոխմարզպետի հարցազրույցներն ու հանդիպումները:

Ապահովել է մարզպետարանի և լրատվամիջոցների միջև կապն ու համագործակցությունը՝ անհրաժեշտության դեպքում պատրաստելով և տարածելով հայտարարություններ, մամուլի հաղորդագրություններ, հարկ եղած դեպքում նաև հանդես եկել պարզաբանումներով:

Ապահովել է օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ:

Մասնակցել է մարզպետարանում անցկացվող նիստերին, խորհրդակցություններին, հանդիպումներին, քննարկումներին՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը: Իրականացրել է մարզպետարանի պաշտոնական կայքէջի անխափան աշխատանքը:

Մարզպետարանի պաշտոնական կայքէջով, ինչպես նաև ֆեյբուքյան էջերով իրականացրել է օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվության պատշաճ հրապարակում համապատասխան բաժիններում և ենթաբաժիններում:
Պարբերաբար տեղադրվել են մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքների ղեկավարների և ավագանու որոշումները:

Օրենքով սահմանված կարգով հանրությանը տեղեկացրել է քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների վերաբերյալ մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից մշակված արդյունքների մասին:

ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

2020 թվականի ընթացքում զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության շրջանակներում բաժինը մշտապես համագործակցել է պետական կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ:

2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են ռազմական դրությամբ պայմանավորված՝ մարզպետարանի գործունեության համապատասխան աշխատանքային ռեժիմի փոխադրման աշխատանքներ:

Սահմանված կարգով իրականացվել են բաժնի փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները: